

«ՊՂՆՁԻ ՔԱՂԱՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԿԱՖԱՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Հ. Ա. ՍԻՄՈՆՅԱՆ

Բազմաթիվ են Մաշտոցի անվ. Մատենադարանում և արտասահմանյան հայ գրապահոցներում գտնվող «Պղնձե քաղաքի պատմության» ձեռագրերը, որոնց ընդօրինակումները շարունակվել են մինչև XX դարը: XVIII դարից սկսած, ընդօրինակումներին զուգահեռ, սկիզբ է առնում և լայն ծավալ ստանում նրա տպագրության գործը՝ հատկապես Կ. Պոլսում, էջմիածնում, Սաղրասում: Ընդհանուր առմամբ հայտնի է Պատմության XVIII—XIX դարերում կատարված շուրջ երկու տասնյակ հրատարակություն: Սրանցից զատ, տարբեր ժամանակներում, քաղվածաբար հրատարակվել են նաև Պղնձե քաղաքի պատմության կաֆաները (ընդմիջող երգեր):

Պղնձե քաղաքի պատմության հետ առնչվող շատ հարցեր թեև վաղուց են արժանացել մասնագետների ուշադրությանը, բայց մինչև օրս էլ շարունակում են տարակարծությունների տեղիք տալ:

Ուշադրության կենտրոնում է եղել հատկապես թարգմանության ժամանակի հարցը, որին առաջին անգամ անդրադարձել է Ղևոնդ Հովնանյանն իր «Հետազոտությունք նախնայաց ռամկորենի վրա» ուսումնասիրության մեջ:

Հենվելով Վիեննայի Մխիթարյան մատենադարանի № 88 ձեռագրում առկա հիշատակարանի հաղորդած տվյալների վրա, բանասերը եզրակացնում է, որ Պատմությունը թարգմանվել է 1222 թ., Առաքել Անեցու կամ Շիրակվանեցու կողմից<sup>1</sup>: Ղ. Հովնանյանի հետևությունները մի շարք բանասերներ (Ն. Անդրիկյան, Հ. Տաշյան, Հ. Քյուրտյան) Պղնձե քաղաքի հավանական կամ հաստատ թարգմանիչ են հայտարարում նույն Առաքել Անեցուն<sup>2</sup>: Թարգմանության հարցին անդրադառնալով, բանասեր Ն. Ակինյանը այն մոտավորապես նույն ժամանակների գործ է համարել, թեպետ ոչ Առաքել Անեցու ձեռքով կատարված: «Թարգմանությունը հին է, հավանորեն 1250—1350 շրջանին, երբ ծաղկեցան Ֆրիկ և Հովհաննես և Կոստանդին Երզնկացիք և թարգմանվեցան Ֆարմանի Ասմանի, Փահլուլ թագավորի, Աղբատ թագավորի և Աբդլ Ճաֆարի և Ճեմիլայի պատմությունները»<sup>3</sup>:

Հայագետների մի այլ խումբ, առանց անդրադառնալու նախորդ բանասերների բերած փաստարկներին, Պղնձե քաղաքի պատմության թարգմանիչ է

1 Գ. Հովսեփյան, Գրիգորիս Աղթամարցի, «Արարատ», 1919, էջ 19: Ա. Չոպանյան, Հայ էջեր, Փարիզ, 1912, էջ 86: Ն. Ակինյան, Գրիգորիս Ա կաթողիկոս Աղթամարի, Վիեննա, 1958, էջ 112:

2 Հ. Ղ. Հովնանյան, Հետազոտությունք նախնեաց ռամկորենի վրայ, Վիեննա, 1897, էջ 332:

3 Ն. Անդրիկյան, Ազգային վեպերեն, «Թարգմանիչ», 1906, էջ 289: Հ. Տաշյան, Յուրակ ձեռագրաց... ի Վիեննա, էջ 348: Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Գ, Երևան, 1946, էջ 372: Հ. Քյուրտյան, Պղնձե քաղաքի պատմությունը, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1955, № 10, էջ 1:

4 Ն. Ակինյան, նշվ. աշխ., էջ 82:

համարում XVI դարի տաղերգու Գրիգորիս Աղթամարցուն: Նման հայտարարություններ ղեկավարելու 1882 թ. հանդես էր եկել Արիստակես վարդ. Տեկանցը<sup>5</sup>: Հետագայում, 1912 թ. Շավարշ վարդ. Սահակյանը, ի հաստատումն վերջինիս, հրատարակ է հանում Պատմության ձեռագիր օրինակներից մեկում առկա մի այլ հիշատակարան, ուր Գր. Աղթամարցին հիշատակվում է իբրև Պղնձե քաղաքի լուսածոց: Այդ հիման վրա էլ նա Գր. Աղթամարցուն է վերագրում թարգմանության և բոլոր կապանների հորինման գործը, զրանով իսկ թարգմանության ժամանակը հետ բերելով դեպի XVI դար: Շավարշ Սահակյանը ուղղակի գրում է. «...մենք կրնանք Գրիգորիս կաթ. Աղթամարցին ճանշալ իբրև թարգմանիչ «Պղնձե քաղաքին» և հեղինակ անոր կապաններուն...»<sup>6</sup>:

Պղնձե քաղաքի նախնական թարգմանության ժամանակի հարցը լուծելու համար շրջադարձային նշանակություն ունեցավ 1958 թ. Ն. Ակինյանի կողմից հայտնաբերված և «Հանդես ամսօրյայում» հրատարակված Պղնձե քաղաքի պատմության հնագույն թարգմանության մինչ այդ անհայտ ընդօրինակությունը: Պարզվում է, որ Առաքել Անեցու թարգմանությունից շուրջ 3 դար առաջ, դեռևս X դարում, Տայոց դավառում «ի խնդրոյ կամ ի հանոյս» հայալզի Դավիթ Կուրապաղատի, թարգմանվել է և Պղնձե քաղաքի պատմությունը: Նրա պատվերով թարգմանվել են մի շարք այլ գրություններ, այդ թվում՝ Մանկան և աղջկա, Ֆարման մանուկի պատմությունները, որոնք զետեղվել են «Զրուց և խաւք ատաշի թագաւորացն և ի իշխանացն, զոր թարգմանեցին Դավիթ Կուրապաղատին ի հայ լեզու ի տաճիկ լեզվէ» վերնագրի ներքո<sup>7</sup>:

Նորահայտ այդ թարգմանությունը ստիպեց նրա հրատարակչին, ապա նաև շատերին վերանայել նախկինում պաշտպանած իրենց տեսակետները Պղնձե քաղաքի պատմության՝ հայ իրականություն ներթափանցելու նախնական ժամանակի մասին: Եթե նախկինում բնաստերների մեծ մասը, անձանթ լինելով Ն. Ակինյանի մատնանշած ձեռագրին և վկայակոչելով սոսկ Ղ. Հովհաննյանի հրատարակած տվյալները, Պղնձե քաղաքի պատմության հայկական առաջին թարգմանությունը համարում էր 1222 թ. Առաքել Անեցու կատարածը, ապա այժմ նոր փաստերի լույսի տակ ընդունվում է հիշյալ թվականից շուրջ երկու դար առաջ կատարված մեկ այլ թարգմանության գոյությունը: Բյուրեղացու թվականից խուսափելու նպատակով իր «Գրիգորիս Ա կաթողիկոս Աղթամարի» գրքին Ն. Ակինյանը կցում է մի հավելված, ուր անդրադառնալով նույն գրքի նախորդ էջերում հիշյալ հարցի շուրջը հայտնած իր կարծիքին, ասում է. «Այժմ, երբ երևան եկավ Պղնձե քաղաքի պատմության նախագրի-գործիս բնագիր մը, հարկ է այս տեսությունը բարեփոխել»<sup>8</sup>:

Նորագույն ուսումնասիրություններում առաջին թարգմանության ժամանակն արդեն տարակուսանքներ չի հարուցում: Իբրև Պղնձե քաղաքի նախնական թարգմանություն վկայակոչվում է Ն. Ակինյանի հրատարակած X դարի թարգմանությունը<sup>9</sup>, որին 1222 թ. հաջորդել է երկրորդ թարգմանությունը, կատարված Առաքել Անեցու ձեռքով:

5 Արիստակես վարդ. Տեկանց, Հայերգ, Քիֆլիս, 1882, էջ 102.

6 Շավարշ Վ. վարդ. Սահակյան, Գրիգորիս կաթողիկոս Աղթամարցի և «Պղնձե քաղաքին» թարգմանությունը, «Տաճար», 1912, № 40, էջ 595.

7 Ն. Ակինյան, Զրուց Պղնձե քաղաքի, «Հանդես ամսօրյա», 1958, 1-4, էջ 21.

8 Ն. Ակինյան, Գրիգորիս Ա կաթողիկոս Աղթամարի, էջ 25Թ.

9 Մ. Ավդալբեկյան, Գրիգորիս Աղթամարցի, Երևան, 1963, էջ 324.



Պղնձե քաղաքի թարգմանության բնագրի և կաֆաների հետ առնչվող շատ հարցեր բանասիրության մեջ կապվել են XVI դարի տաղերգու Գրիգորիս Աղթամարցու անվան հետ:

Պղնձե քաղաքի արաբական բնագիրը, «Հազար ու մի գիշերի» շատ գրույցների նման, ունեցել է ողբերի ձևով ասված խրատական կաֆաներ, որոնք ծառայել են արժարժվող հիմնական գաղափարների լուսաբանմանը: Հայ թարգմանիչները, բնականաբար, պետք է թարգմանեին և այդ կաֆաները կամ դրանց մի մասը: Հետագայում պահանջ է զգացվել Պատմությունը թարմացնել բանաստեղծական նորանոր երգվող ընդմիջարկություններով (կաֆաներով): Այսպիսով, բնագրային կաֆաների կողքին, աստիճանաբար, տեղ են գտնում մեծ թիվ կազմող բոլորովին նոր քառյակներ-ութնյակներ: Եվ եթե Պատմության ամենահին ընդօրինակությունն ունի շուրջ 24 կաֆա, ապա որոշ ձեռագրերում դրանց թիվը հասնում է 80-ի: Դարերի ընթացքում կատարված աստիճանական այս ներմուծումները ստեղծել են այնպիսի հարաբերակցություն Պղնձե քաղաքի օրինակների միջև, որը հնարավոր է դարձնում ըստ կաֆաների առկայության տարբերել այդ երկի երեք խմբագրություն՝ նախնական, նախագրիգորիսյան և գրիգորիսյան:

1. Նախնական խմբագրություն. Սա, ինչպես նշվեց, կատարված է X դարում, ժամանակի խոսակցական լեզվով՝ «գողտրիկ գավառաբարբառով...», ունի 24 կաֆա, որոնց մի մասը թարգմանական է: Դրանից առաջինը սկսվում է «Գնաց ժամանակ սոցա», իսկ վերջինը՝ «Աւաղ տամ հազար բերան» տողով: Այս կաֆաները շունեն հեղինակային պատկանելության նշումներ, հաճախ անմշակ են, երբեմն՝ թերի և աղճատ: Ըսկ բուն բնագիրը (արձակ մասը) մյուս օրինակների համեմատությամբ համառոտ է: Այս խմբագրության միակ օրինակը Ն. Ակինյանի հրատարակած՝ Դավիթ Կուրապաղատի պատվերով կատարված թարգմանությունն է:

2. Նախագրիգորիսյան խմբագրություն. Այս խմբագրության կաֆաները ևս սովորաբար սկսվում են «Գնաց ժամանակ սոցա» և ավարտվում «Աւաղ տամ հազար բերան» կաֆայով: Նախնական խմբագրության պարունակած կաֆաներից զատ ունեն հավելյալ նոր կաֆաներ: Կաֆաների ընդհանուր թիվը հավասար է 50-ի: Այստեղ ևս բացակայում են նշումներ հեղինակների մասին: Նախագրիգորիսյան խմբագրության պատկանող ձեռագրերը Մաշտոցի անվ. Մատենադարանում հետևյալներն են՝ №№ 1677, 1682, 6451, 7076, 7227, 7709, 8267, 8963, 9428, 10107, 10166:

3. Գրիգորիսյան խմբագրություն. Գր. Աղթամարցին նշանակալի աշխատանք է կատարել բնագրային կաֆաների մշակման և իր կողմից ստեղծված կաֆաներ ներմուծելու ուղղությամբ: Կաֆաների թիվն է 65—75, որոնք ունեն հաստատուն, ուրույն դասավորություն: Այստեղ, սովորաբար, առաջինը «Ասեմ քեզ զրուց, Մուսէ...» սկզբնատողով կաֆան է, որին հաջորդում են նախորդ խմբագրություններում բացակայող որոշ տներ: Մնացած հավելյալ կաֆաները ցրված են ողջ շարադրանքի մեջ որոշակի կարգով, սակայն այնպես, որ նորից ավարտվեն «Աւաղ տամ հազար բերան...» կաֆայով: Փոքր թիվ չեն կազմում «Գրիգորիս» անունը կրող կաֆաները: Գրիգորիսյան խմբագրության են պատկանում Մատենադարանի №№ 2354, 5622, 6092, 6185, 6485, 6961, 8332, 8387, 8447, 8698, 8724, 9265, 10275 ձեռագրերը:



Այսպիսի պայմաններում նախ անհրաժեշտ է դառնում առանձնացնել բուն բնագրային կաֆաները հետագա ներմուծումներից, ապա միայն անդրադառնալ հայ հեղինակների հորինած առանձին կաֆաներին կամ նրանց խմբերին: Որոշակի դժվարությունների հետ է կապված «բնական ողբերի» տարբերակումը: Դեռևս չի գտնված այն հնագույն խմբագրությունը, որից կատարված է զրույցի հայերեն թարգմանությունը X դարում: Ավելին, Պղնձե քաղաքի հայերեն մնացած բոլոր օրինակներն անգամ՝ ամփոփված հետագա դարերի զրույցներում և տպագիր ժողովածուներում, թեև մոտենում, սակայն լիովին չեն նույնանում զրույցի հանրահայտ «եգիպտական խմբագրությանը» (ստեղծված անհամեմատ ուշ՝ XIV—XVI դդ.): Արաբերեն ձեռագրերի առանձին օրինակներն իրարից տարբերվում են նաև կաֆաների բնույթով, դասավորության եղանակով ու քանակով:

X դարում հայերեն թարգմանված Պղնձե քաղաքի պատմությունը պետք է ավելի նախնական վիճակ ներկայացնի: Պատմության եգիպտական խմբագրության արաբերեն<sup>10</sup> և ռուսերեն<sup>11</sup> օրինակների հետ հայերեն օրինակների հանդիպողորումից պարզվում է, որ վերջիններս ավելի սեղմ են, սխեմատիկ (և՛ բնագիրը, և՛ կաֆաները): Ամենայն հավանականությամբ, արաբական օրինակներում ներմուծումները կատարվել են աստիճանաբար, հետագա խմբագրությունների ընթացքում: Իսկ հայերեն տարբերակը ավելի վաղ վիճակ ներկայացնելով, զերծ է մնացել այդ կերպարանափոխություններից:

Միջնադարի հայ թարգմանիչները ևս կաֆաների հարցում բավական հեռացել են բնագրից: Անտարակուսելի է, որ վերջիններս, ելնելով հայոց լեզվի տաղաչափական առանձնահատկություններից, որոշ խմբագրությամբ են ներկայացրել կաֆաները: Ակնբախ է, որ խմբագրման գործը տարվել է մի ուղղությամբ. ուշադրությունը հիմնականում սևեղծված է եղել զղջման, ապաշխարանքի և հոգևոր կյանքի փառաբանման վրա, որով և նկատելիորեն ստվերի տակ է թողնվել բնագրի երգերի համեմատաբար աշխույժ ոգին: Բաղմավաստակ հայագետ Արշակ Չոպանյանը իրավացիորեն նկատում է, որ «հայ թարգմանիչը ընդհանուր իմաստն առնելով իր ուղածին պես շարադրած է (ավելի պարզուկ և ավելի համառոտ)»<sup>12</sup>: Նման վերաբերմունք է եղել և զրույցի արձակ մասերի նկատմամբ: Հավանաբար այս հանգամանքն էլ նկատի առնելով, Չոպանյանը իր կազմած «Հայ էջեր» ժողովածուի մեջ հրապարակած Պղնձե քաղաքի 10 կաֆաները (հանված Փարիզի Ազգային մատենադարանի № 308 ձեռագրից) բնութագրում է իբրև հայկական բանաստեղծություն՝ «օտար գործի մը հետևողությամբ գրված»<sup>13</sup>: Որոշակի դեր է խաղացել բնագրում եղած մուսուլմանական կրոնի հետ կապվող պատկերացումները հայկականով փոխարինելու երևույթը:

Այս բոլորով հանդերձ, այդ ուղղությամբ տարված բանասիրական պրպրտումները հնարավորություն են ընձեռում ընդհանուր պատկերացում ունենալ

<sup>10</sup> Tausend und Eine Nacht, Arabisch, nach einer Handschrift aus Tunis, Hrsg. von Dr. Maximilian Habicht, Breslau, 1834.

<sup>11</sup> „Тысяча и одна ночь“, Госиздат, 1959.

<sup>12</sup> Ա. Չոպանյան, Հայ էջեր, էջ 10:

<sup>13</sup> նույն տեղում:

թարգմանական կաֆաների մասին<sup>14</sup>։ Չծավալվելու համար նշենք միայն, որ Ն. Ակինյանի «Հանգես ամսօրյայում» հրատարակած օրինակը համեմատաբար ճիշտ է ներկայացնում բնագրային կաֆաների ընդհանուր պատկերը։

Քննությունը պարզում է, որ Պղնձի քաղաքի պատմության հայկական օրինակներում ընդգրկված կաֆաներից առնվազն հետևյալ տասը իրենց հիմքում ունեն արաբական համանման երգեր.

- |                            |                                 |
|----------------------------|---------------------------------|
| 1. Մանն, որ յայս տեղս գայ  | 6. Ես էի մեծ քազուր             |
| 2. Մանն բաժանեց զմեզ       | 7. Արարիչն արարածոց             |
| 3. Քանի՜ Աղամայ որդիք      | 8. Մեռած, թէ հազար էմ           |
| 4. Հաշվէ, թէ քանի քարի     | 9. Ձինչ գանձ ու կուժաշ կայր ինձ |
| 5. Եկն ինձ ման և ոչ կարացի | 10. Ո՛ր են քազուրք երկրի        |

Բնագրային կաֆաների հետ ունեցած առնչությամբ վերոհիշյալ երգերը հավասարաբար չեն. նրանց մի մասը հարազատ թարգմանություն է, մյուսներում առկա են փոփոխություններ, մնացածներն էլ փոխադրություն են հիշեցնում։

Հարազատ թարգմանված կաֆաներում հիմնականում ճշտորեն վերարտադրված է լինում համապատասխան երգի բովանդակությունը՝ Ահա մի հատված այդ կաֆաներից.

Нет пользы от воинов, которых я набирал, Ни друг, ни соседи мне тогда не помогут... К другому перед зарей вернется она опять, Носильщик когда придет к тебе и могильщик.	Ես ո՛չ բազում հեծել ազնեցիք ինձ, Ո՛չ ազգականք իմ ազնեցիք ինձ, Ի ամենայն մեծութենէս տարան զիս Շալկող և փոռող մի <sup>15</sup> ։
--	---

Ընդ որում, նույնն է նաև մեջբերված կաֆաների տեղադրումը արձակ բնագրում. նույնական են նրանց նախորդող և հաջորդող հատվածները։

Երբևմն հայերեն օրինակի և ավելի ինքնուրույն կաֆաների համադրությունը տալիս է բնագրի մեկ կաֆայի համարժեքը.

Коль вспомните меня через много лет вы, Превратности когда друг друга сменят. То я—Шеддада сын, людей владыка, И всей земли со всякою страной... Я был велик, царей их унижал я, И жители земли меня боялись.	1. Ասող զմեռած առունս իմ, Որ այլ ոչ բնաւ յիշուի բարի. Քազուր՝ որդի Գաղատայ, Քազուրի որդի Շաայ: 2. Ես մեծ քազուր էի, Ձօրուր, հօր և արի.
--	---

<sup>14</sup> Մենք հիմնականում հենվում ենք Պղնձի քաղաքի Ն. Ակինյանի հրատարակած օրինակի, «1001 գիշերի» արաբերեն հրատարակության (Tausend und Eine Nacht, Arabisch, nach einer Handschrift aus Tunis, Hrsg., von M. Habicht, Breslav, 1834), վերջինիս հետ ընդհանուր առմամբ նույնացող ուղևորներն («Тысяча и одна ночь», М., 1959) հրատարակության և Մատենադարանի համապատասխան ձեռագրերի վրա։ Հրատարակիչ աղբյուր է 1902 թ. Պետերբուրգում լույս տեսած «Тысяча и одна ночь» ժողովածուն (ըստ Մարգարյուսի ֆրանսերեն թարգմանության)։

<sup>15</sup> Այս և հաջորդ համեմատելի կաֆաները վերցնում ենք զրույցի ուղևորներ թարգմանության 1959 թ. հրատարակությունից, քանի որ վերջինիս արաբերեն նախօրինակը մոտ է հայկականին։ Հոդվածը շտապարեւոնելու նպատակով այստեղ չենք մեջբերում զրույցի 1839 թ. Բրեսլաու քաղաքում հրատարակված արաբերեն բնագրի համապատասխան կաֆաները, որոնք ընդհանուր լուծամբ նույնանում են վերոհիշյալ ուղևորներ կաֆաներին։



Я владел деньгами, числа которых сочесть  
нельзя,  
Копил я их на случай перемены,  
И мне думалось, будто выкуплю всем  
богатством я  
Мои дух и жизни срок назначу новый.  
Все отверг господь, и свою лишь волю  
исполнил он,  
И теперь один я, лишен друзей и братьев.

Այս և այլ օրինակների հիման վրա հնարավոր է ենթադրել, որ թարգմանությունը գուցահեռ, շանտեսելով հայկական հայրեն-կաֆաների քառյակային-ութնյակային բնույթը, հայ թարգմանիչները բնագրի երկարաշունչ կաֆաները մասնատել են պողտրիկ երգերի և տեղագրել: Կատ-դատ, երբևմն էլ բնագրի տարբեր մասերում:

Ահա մի ուրիշ օրինակ.

Где ныне цари и то,  
Что в мире построили?—  
Покинули то они,  
Что строили на земле,  
В могиле они лежат  
Залогом за дело их,  
И тлеют они в земле,  
Бесславно погибшие...

Ո՛ր են քաղաքում երկրի,  
Որ առաջ գանձանքն յիշեցի:  
Եւ կամ քանի քաղաք  
Սւ բերդեր յերկիր շինեցին.  
Ի՞նչ մահն ի վերայ երեկ,  
Նայ ամէնքն դարտակ զնացին.  
Իրեանց անիմուն գանձէն  
Լուկ իրեանց հետ փող մի շափն:

Նկատեցինք, որ թարգմանությունը հաճախ կատարված է փոփոխություններով: Նման կաֆաների գրաված տեղերը և ընդհանուր ոգին նույնը լինելով, նմանությունը մոտավոր է լինում: Այս իմաստով էլ այդ կաֆաները հեռավոր տարբերակներ կամ ազատ վերաշարադրումներ են հիշեցնում: Ահավասիկ մի օրինակ.

Как часто я медлил, как часто метался,  
Как много я разных людей перевидел!  
Как много я съел и как много я выпил,  
Как много я слышал певич в своей жизни!  
Как много запретов, как много приказов  
Я дал и как много дворцов неприступных  
Подверг я осаде, потом обыскал,  
И много певич я оттуда похитил,  
Но только глупец, я предал перешел  
Пытаясь добиться того, что не вечно...

Հաշվէ, թէ ՔԱՆԻ բարի  
Յայս անուն կեանքս վայելեցեր.  
Ու կամ թէ ՔԱՆԻ քաղաք  
Ու բերդեր յայլոց խլեցեր:  
Հիմիկ ես խաւար մտաւ  
Ու որդունքն այլ գան ի քեզ.  
Ինչե՛ր ունի պացխուն տալու,  
Որ այս կեանքս գրկեցեր:

Թվարկված 10 կաֆաներից զատ, Պղնձե քաղաքի առանձին ընդօրինակություններում առկա են «Ո՛ր, Ագամա որդիք» սկզբնատողով կաֆաներ, որոնք իրենց տեղադրումով և բովանդակությամբ համապատասխանում են արաբերեն բնագրի որոշ արձակ դարձվածներին: X դարի թարգմանության մեջ այդպիսի կաֆաները երկուսն են, որոնք, ինչպես վկայում են փաստերը, հետագայում համարվել են համահնչուն այլ կաֆաներով:

Փաստերը ցույց են տալիս, որ Պղնձե քաղաքի պատմության համար կաֆաներ են հորինել Միսրաբը (XIII դ.), Հովսեփ Աղբամալցին (XVI դ.), Գրիգորիս Աղբամալցին (XVI դ.), Զաֆարիա Գնունյանցը (XVI դ.) և ուրիշներ: Մխիթարն իրրև կաֆաների հեղինակ մինչև օրս անձանոթ է մնացել բանասիրությանը: Ելնելով որոշ փաստերից, հնարավոր է ենթադրել, որ նորա-

հայտ այս բանաստեղծի անունով ավանդված կաֆաները ժամանակագրական առումով Պղնձե քաղաքի պատմության առաջիկ հայտնի հեղինակ ունեցող կաֆաներից հնագույնն են:

Ո՞վ է Մխիթարը: Բանասիրությանը հայտնի բազմաթիվ նույնանուն անհատներից և ոչ մեկին Պղնձե քաղաքի կաֆաների հետ ուղղակիորեն առնչող մատենագիտական հիմքեր առայժմ չեն հայտնաբերված: Այնուամենայնիվ, որոշ կցկտուր տեղեկություններ հուշում են XIII դարում ապրած, Պղնձե քաղաքի պատմության թարգմանիչ Առաքել արեղա Անեցու կամ Շիրակվանեցու գործակից Մխիթար Չեչկանց Շիրակվանեցու անունը: Հայտնի է միայն, որ Առաքել Շիրակվանեցին թարգմանություններ կատարելիս՝ օգտվել է Մխիթար Չեչկանցի աջակցությունից<sup>16</sup>:

Անիին մերձակա Բագնայր գյուղի վանքի 1223 թ. արձանագրություններից մեկում Մխիթարը հիշատակվում է իբրև որդի «Չեչկանց Աւետեացն» և հայր վահրամի<sup>17</sup>:

Մխիթարի կաֆաները հանդիպում են Մաշտոցի անվ. Մատենադարանի միայն մեկ՝ № 6185 ձեռագրում (XVII դար, գրիչ՝ Հովհաննես Ավերակցի): Վերջինս Պղնձե քաղաքի գրիգորիսյան խմբագրությանը պատկանող օրինակներից է, իսկ նրանում եղած կաֆաներն էլ հայտնի են Պատմության այլ ձեռագրերից: Նորություն են կազմում սոսկ Մխիթարի «Ասաց Ամիրմուսէն զկաֆայս ի Մխիթարէ», «Եւ ասաց զողբս ի Մխիթարէ» և նման նշումներ ունեցող թվով հինգ կաֆաները, որոնց սկզբնատողերն են.

1. Քաղաք գեղեցիկ շինած
2. Էնց զարմանալի շինուածք
3. Բազմեալ բազումի ղշխայ
4. Ձարմանք է զորձ արարչին
5. Գերի Աղամաւ որդի:

Եթե կաֆա հորինող հեղինակներին արևելյան այս գունագեղ զրույցի մեջ հրապուրել և բանաստեղծական ներշնչանքի աղբյուր է հանդիսացել աշխարհի ունայնության, վայելքների անցողիկության և աստվածային ամենակարողության խիստ միջնադարյան մտայնությունը, ապա Մխիթարը տալիս է քաղաքի, արքայական գահույթի, առասպելական կենդանու երևակայական նկարագիրը: Ակնառու է Աղեքսանդրի առասպելական պատմության համապատասխան դրվագների բրբեմն բառացի նմանությունների հասնող ազդեցությունը Մխիթարի կաֆաների վրա:

Ժամանակագրական առումով Մխիթարին հաջորդած մյուս հեղինակը Հովսեփ Աղթամարցին է: Այս բանաստեղծի մասին մեզ հայտնի փաստերը կցկտուր են:

Գ. Հովսեփյանը, մատնանիշ անելով Պղնձե քաղաքի պատմություն ներմուծած նրա մի կաֆան, գրում է. «Գրիգորիս Աղթամարցին ճոխացրել է կաֆաներով (Պղնձե քաղաքի պատմությունը—Հ. Ս.), ավելի ևս խտացնելով Պղնձե քաղաքի մեջ արտահայտված մտքերը. այդ գործում նրան աջակից է հանդիսացել և Հովսեփ Աղթամարցին. գոնե ՍԸ կաֆան նշանակված է սորա անունով...»<sup>18</sup>: Մեկ այլ տեղ, վկայակոչելով էջմիածնի № 588 (այժմ՝ Մաշտոցի

16 Հ. Ա ճ ա ո յ ա ն, Հայոց անձնանունների բառարան, Գ, էջ 372:

17 Ղ. Ա լ ի շ ա ն, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 121:

18 Գ. Հ ո Վ ս ե փ յ ա ն, Գրիգորիս Աղթամարցի, էջ 16:



անվ. Մատենդարանի № 5622) ձեռագրի նշումները, դարձյալ կրկնում է. «Մի ողբ նշանակված է Հովսեփ Աղթամարցու անունով»<sup>19</sup>:

Այսքանով սպառվում են կոնկրետ տեղեկությունները կաֆաների ասպարեզում Հովսեփ Աղթամարցու կատարած աշխատանքի մասին: Հետագայում Ճիայն Ն. Ակինյանը, օգտվելով մի այլ աղբյուրից (Վիեննա, № 977 ձեռ.), բավարարվում է Գ. Հովսեփյանի նկատած կաֆայի թուուցիկ հիշատակումով<sup>20</sup>: Խոսքը «Գերի Աղամայ որդի, զամէն է՛ր կատես հետ մեղաց»... ութատող կաֆայի մասին է, որը Պղնձե քաղաքի մի շարք օրինակներում (№№ 10275, 5622, 6185, Վիեննայի № 977 և այլն) կրում է Հովսեփ Աղթամարցու անունը: Անկասկած, այս վերագրումը պետք է հավաստի համարել, քանի որ հակառակ ցուցումներ հայտնի չեն:

Այժմ անցնենք Պղնձե քաղաքի պատմության համար Գր. Աղթամարցու հորինած կաֆաներին:

Գր. Աղթամարցու գրչին վերագրված կաֆաներ են հրատարակել տարբեր բանասերներ, որոնք վստահություն են ցուցաբերել իրենց հայտնի մեկ ձեռագրի վկայությունների նկատմամբ: Այդ իմաստով ուշագրավ են ՚ր. Հովսեփյանի մտորումները: Նա նկատում է, որ իր տրամադրության տակ գտնվող ձեռագրում թվով 34 կաֆաները, որոնք ներկայացվում են ՚ր. Աղթամարցու անունով, ասված են հերոսների կողմից, օրինակ՝ «Ի բերանոյ ալեւորին», «Եւ ասաց Ամիրմուսէն զողբս ի Գրիգորիսէ» և այլն, ի հակադրություն մնացած ողբերի, որոնք «բուն պատմության մասն են կազմում՝ գրված արձանների կամ գերեզմանների վրա»: Անհեղինակ կաֆաներից, սակայն, Հովսեփյանը առանձնացնում է վերոհիշյալ 34-ի հետ որոշ ընդհանրություններ դրսևորող նույնատիպ 9 կաֆա, որոնց՝ ձեռագրերում անհեղինակ լինելը, ըստ հրատարակչի, չի խանգարում դրանք Գր. Աղթամարցունը համարել: Այսպիսով, ըստ ՚ր. Հովսեփյանի, ստացվում է 43 կաֆա, այսինքն այնքան, որքան Աղթամարցին իրեն է վերագրում ձեռագրի հիշատակարանում:

Որքան էլ հավանական են թվում այս դատողությունները, որոշ հանգամանքներ, սակայն, կասկածի տակ են առնում այդ հաշիվները: Նախ, չպետք է մոռանալ, որ այդ 9 կաֆաների մի մասը արդեն առկա է Պատմության X դարի թարգմանության մեջ, որին ծանոթ չի եղել բանասերը: Այնուհետև փաստերին հակասում է բանասերի այն պնդումը, թե «բնական» (բնագրային) ողբերը բացառապես արձանների և տապանաքարերի վրայի եղածներն են: Ինչպես երևում է, բնական ողբերի շարքում չի բացառված նաև տարբեր հերոսների կողմից ասված որոշ կաֆաների գոյությունը: Օրինակ.

...Окружавшие его слушали... и стал говорить такие стихи:

—Что до меня, мне Сулейман не страшен,

Ведь обо всех делах осведомлен я...

Այս հատվածը ուսերեն է թարգմանվել արաբերեն բնագրից:

Այնուհետև Գ. Հովսեփյանը ձեռագրի մնացած 28 կաֆաները դասում է բնագրային երգերի շարքը: Այդ կարծիքը ևս առայժմ մնում է տարակուսելի.

19 Նույն տեղում, էջ 17:

20 Ն. Ակինյան, Գրիգորիս կաթողիկոս Աղթամարի, էջ 19:

21 Այս կաֆան շշտոթել Մխիթարի 5-րդ, նույն սկսվածքն ունեցող կաֆայի հետ:



որովհետև մեզ հայտնի արաբական երկու բնագրերում եղած կաֆաների թիվը կազմում է 14: Ըստ երևույթին, այստեղ անտեսվել է հայ այլ հեղինակների կաֆաների գոյության հնարավորությունը:

Գր. Աղթամարցու կաֆաների հաջորդ հրատարակումը պատկանում է Ն. Ակինյանին, որն օգտվել է Վիեննայի Մխիթարյան մատենադարանի № 977 գրչագրից (ԺՁ դ.): Բանասերը Գրիգորիսի վաստակը տեսնում է Պղնձե քաղաքի «բնագրի մեջ աղավաղած, պակասավոր կաֆաներու թիվը աճեցնելու մեջ»<sup>22</sup>: Ընդ որում, նշված ձեռագրում Գրիգորիսին վերագրված 45 կաֆաներից 18-ը նա համարում է տաղերգուի կողմից մշակված բնական ողբեր: Հետևաբար, մնում է ենթադրել, որ մնացած 27 կաֆաները դիտվել են իբրև բուն գրիգորիսյան կաֆաներ: Ն. Ակինյանն այնուհետև մեկ-երկու կոնկրետ օրինակով մատնացույց է անում միջնադարյան բանաստեղծների, հատկապես Մկրտիչ Նաղաշի բանաստեղծությունների վրա Պղնձե քաղաքի որոշ կաֆաների ազդեցությունը:

Բանասիրական գիտությունների թեկնածու Մ. Ավդալբեգյանը իր «Գրիգորիս Աղթամարցի» մենագրության ծանոթագրություններում հատուկ բաժին է հատկացրել Պղնձե քաղաքի ձեռագրերի քննությանը (տե՛ս նշված աշխատության 323—327 էջերը): Հեղինակին հատկապես հետաքրքրել է Պղնձե քաղաքի պատմության կաֆաների հորինման գործում Գր. Աղթամարցու կատարած աշխատանքի հարցը, որի մասին նա եզրակացնում է. «Մաշտոցյան Մատենադարանի մեր ձեռքի տակ եղած ձեռագրերը կասկածելի են դարձնում նաև այդ կաֆաների՝ Աղթամարցու սեփական ստեղծագործություն լինելու հանգամանքը»:

Պղնձե քաղաքի պատմության կաֆաների հորինման գործում Գր. Աղթամարցու վաստակը ներկայացնելու իմաստով բացառիկ դեր ունի Մաշտոցի անվ. Մատենադարանի № 5622 ձեռագիրը, որն ամփոփում է տաղերգուի արժեքավոր հիշատակարանը և կաֆաները: Ձեռագիրն ընդօրինակված է 1700 թ., Գրիգոր քահանայի ձեռքով «ի Ջերմաձոր, Մոկաց թաղին»<sup>23</sup>: Ուշագրավ է ձեռագրի հիշատակարանը, ուր որոշակիորեն ասվում է, որ տաղերգուն բնագրի «բնական» ողբերի թիվը ավելացրել է իր իսկ հորինած ԽԳ (43) կաֆայով:

Ղուսածող Պատմութեան Պղնձէ քաղաքիս՝  
Ձկաթողիկոսն Գրիգորիս,  
Յիշեցէ՛ք յաստուած ողորմիս  
Ըզեղկելի մեղօք գերիս.

Քառասուն երեք սար ու ջումլայ  
Ոտանաւոր ողբ կա ի սմայ,  
Յանիմաստէս գրեալ ի սայ,  
Մտացրդ ձեր յսեոյանայ...<sup>24</sup>.

Այս վկայությունը հաստատված է նաև ձեռագրի նույնանուն գրչի՝ Գրիգոր քահանայի հիշատակարանում. «Ո՛վ եղբարք, յորժամ ընթեռնուք զպատմութիւնս և զուարճանայք, յայնժամ զիմաստուն կաթողիկոսն զտէր Գրիգորիսն յիշեցէ՛ք և աստուած ողորմի ասացէ՛ք նմայ, զի շատ աշխատեցաւ ի հետ սորայ և ԽԳ ողբ յիրմէն ասեալ ի սայ, թող զայն, որ զերկու վանկըն և զմեկն ինքն էր արարեր ի բնական ողբերն, զի պակաս էր ընդ նմին...»<sup>25</sup>:

22 Ն. Ա կ ի ն յ ա ն, Գրիգորիս Ա կաթողիկոս Աղթամարի, էջ 88:

23 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 5622, թ. 231 ր:

24 Նույն տեղում, թ. 54 ր:

25 Նույն տեղում, թ. 55ր: Հայտնի են նույն հիշատակարանները պարունակող Պղնձե քաղաքի ևս երկու օրինակ: Առաջինը գրված է 1624 թ. (տե՛ս «Տաճար», 1912, № 40, էջ 595), երկրորդը՝ 1628 թ. (տե՛ս Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 10329, թ. 113ր):

Կարելի է բերել ուրիշ փաստեր ևս, որոնք ավելի հավանական են դարձնում միջնադարյան թարգմանական զրույցների հետ նշանավոր տաղերգուի նմանօրինակ կապերը: Եվ իրոք, հայտնի է, որ Գրիգորիս Աղթամարցին գործոն մասնակցություն է ունեցել նաև Ալեքսանդր Մակեդոնացու հանրահայտ պատմությունը կաֆաներով հարստացնելու գործին: Իբրև այդ իրողությունը հավաստող անառարկելի փաստարկներ կարելի է հիշել 1526 և 1536 թթ. բանաստեղծի անմիջական մասնակցությամբ ստեղծված Ալեքսանդրի պատմության երկու ձեռագրերում եղած ինքնագիր կաֆաները<sup>26</sup>:

№ 5622 ձեռագրում կաֆաների թիվն է 72, որոնք բոլորն էլ համարակալված են հայկական այբուբենի տառերով, ընդ որում, 34 կաֆայի դիմաց՝ լուսանցներում կա «Գրիգորիս» նշումը:

Պետք է նշել, որ № 5622 ձեռագիրը հիմնականում (մասնակի խոտորումներով) հետևում է մի որոշակի սկզբունքի: Այդ ձեռագրում Գրիգորիսի անունով են նշանակված հիմնականում այն կաֆաները, որոնք շկան նախագրիդորիսյան օրինակներում: Սրանք Գր. Աղթամարցու այն կաֆաներն են, որոնք հետագայում որոշ հաջորդականությամբ ավելացվել են արդեն եղած կաֆաներին:

Հասկանալի է, Գր. Աղթամարցին ինքը կամ նրան ժամանակակից որևէ քրիշ է գրիգորիսյան նորաստեղծ կաֆաները, հին կաֆաներից զատելու նպատակով, ներկայացրել հեղինակի անվան նշումով:

Այստեղից պարզ երևում է, որ 1857 թ. տպագրության հիմքում ընկած ձեռագիր օրինակում չեն եղել այն կաֆաները, որոնք կան № 5622 ձեռագրում և կրում են «Գրիգորիս» նշումը: Կնշանակի վերջիններս, իրոք, առանձին ծագում ունեն՝ կապված Գր. Աղթամարցու անվան հետ: Գո. Աղթամարցու հորինած կաֆաների սկզբնատողերն են.

- |                               |                              |
|-------------------------------|------------------------------|
| 1. Ասեմ քեզ գրուց, Մուսէ՛     | 13. Այս կեանքս ի խաբող յերակ |
| 2. Յոյս ունիմ ես առ աստուած   | 14. Գագանք, դուք յաջմէ եկէք  |
| 3. Աղաչեմ զքեզ, ստեղծող       | 15. Մի՛ երկնչիր, ո՛վ արեայ   |
| 4. Մեր կեանքն է զեռաց նման    | 16. Ո՛վ անհնէնի աստուած      |
| 5. Յառաջ ի քաղաքն իջնուց      | 17. Է՛, զարմանագործ աստուած  |
| 6. Երբ թիրն կենաց լքցուք      | 18. Այս անցաւորական աշխարհս  |
| 7. Մեռաւ նախահարն Աղամ        | 19. Քանի մի խրատ տամ քեզ     |
| 8. Ա՛յ իմ զեղեցիկ արեայ       | 20. Անթի եւ բազում մարդիկ    |
| 9. Մարդ, որ յինչէն յուզվ լինի | 21. Մուսէ՛, դու բազում լացիր |
| 10. Ձինչ որ Աղամայ որդիք      | 22. Մահն ոչ թագաւոր կասէ     |
| 11. Իմ զօ՛րք, իմ հեծե՛լք ամէն | 23. Այս երևելի բարիքս        |
| 12. Մուռ մարդ ու ապլան յուզվ  |                              |

Համապատասխան որոշ վկայություններ են պահպանվել նաև №Ն 10329, 10275, 6185 և այլ ձեռագրերում, որոնք բոլորն էլ պատկանում են գրիգորիսյան խմբագրությանը: № 5622 ձեռագրի նշումները հիմնականում համընկնում են նույն խմբագրությանը պատկանող Վիեննայի Մխիթարյան մատենադարանի № 977 ձեռագրի տվյալներին<sup>27</sup>:

Սրանցից զատ, № 5622 ձեռագրում հանդիպում ենք Գրիգորիսին վերագրված մի քանի կաֆաների, որոնք միևնույն ժամանակ առկա են և նախագրի-

<sup>26</sup> Այդ մասին տե՛ս մեր հոդվածը ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. դիտ.), 1968, № 8, էջ 85:

<sup>27</sup> Ն. Ա. Կ. ի. յ. յ. յ. յ., Գրիգորիս Ա կաթողիկոս Աղթամարի, էջ 112:



գործիսյան խմբագրության օրինակներում՝ առանց հեղինակի անվան: Ո՞րն է այս երևույթի բացատրությունը: Թերևս հենց այստեղ պետք է որոնել Աղթամարցու կողմից բնական ողբերի պակասող տողերի և վանկերի հավելման փաստը, որի մասին ձեռագրի հիշատակարանում ակնարկում է հիշյալ Գրիգոր քահանան. «ղերկու վանկըն և ղմէկն ինքն էր արարեր ի բնական ողբերն, զի պակաս էր»: Ըստ այսմ, Գր. Աղթամարցին հենց այս վերջին խմբի կաֆաների մեջ է, որ պիտի էատարած լինի լրացումներ: Նման ենթագրությունը ավելի քան հավանական է դառնում, երբ դիմում ենք ուղղակի թյոք կաֆաներին: Նրբանցից մեկը, որը մի շարք ձեռագրերում (№№ 10275, 5622, 6185, Վիեննայի № 977) Գրիգորիսի անունով է, աղճատումներով առկա է անգամ X դարի օրինակում: Ահա X դ. օրինակում եղած այդ կաֆան և նրա դիմաց՝ նույնի՝ Գր. Աղթամարցու անվամբ հայտնի տարբերակը.

Գեղեցիկ դավունք եւ քազուրական,  
շինել շկարէ մարդ զայս ոչ ոսկի նման.  
Դուք վայ շինողացս տուք,  
որ շվայլեցաք զինքս միաբան.  
Գնացաք և տեղիս թողաք,  
մեր ամեն ոսկերք հողացան:

(«Հանդես ամսօրյա», 1930,  
№ 1—4, էջ 43):

Այս դուռնս զեղեցիկ, աղուր,  
զովելի, մեծ, արքայական.  
Չկարէ շինել այլ բան զայս,  
զի այս շինուածքս է աննման.  
Այ վայ դուք սոցա տուէք,  
որ շեղաւ նա մեզ բնակարան,  
Գրնացաք և աստ թողաք  
զանցաուր շինուածքս ամենայն:

(Պատմութիւն Պղնձէ քաղաքին,  
Տփղիս, 1857, էջ 33):

Այստեղ էլ, սակայն, զգացվում է լրացուցիչ փաստերի անհրաժեշտություն:

Հնարավոր է մեկ այլ ենթագրություն ևս. քանի որ Պղնձե քաղաքի մեղ հասած ձեռագրերը հիմնականում ընդօրինակված են XVII—XVIII դդ., ապա բացառված չէ, որ հետագայում նախագրիգորիսյան որոշ օրինակների մեջ փոխանցված լինեին և գրիգորիսյան մի քանի կաֆաներ:

Քննվող հարցի առնչությամբ գոյություն ունի մասնակի տարակուսանք հարուցող մի հանգամանք, որը կարող է որոշ դեպքերում շփոթությունների տեսիլք տալ: Խոսքը վերաբերում է Վիեննայի Մխիթարյան մատենադարանի № 58 ձեռագրին՝ ընդօրինակված Տրապիզոնում, 1657 թ., Ամիրասի երզնկացու կողմից<sup>28</sup>: Այդ ձեռագրի հետ մեր ունեցած ծանոթությունը սահմանափակվում է Տաշյանի հաղորդած տեղեկություններով: Ըստ հիշատակագրի հավաստման (թ. 6բ), ձեռագրում ամփոփված Պղնձե քաղաքի պատմությունը, ինչպես և մի երազահան «ի յարապ լեզւէ ի հայոց բառ» է թարգմանել Առաքել Անեցին կամ Շիրակվանեցին 1222 թ., օժանդակությամբ Մխիթար Չեչկանցի: Մեզ հայտնի է նաև ձեռագրի առաջին կաֆան՝ «Ասեմ քեզ զրուց, Մուսէ»: Հենվելով այս փաստի վրա և ելնելով նույն կաֆայով սկսվող մի շարք ձեռագրերի ծանոթությունից, հնարավոր է վերջինս ևս դասել գրիգորիսյան խմբագրության ձեռագրերի շարքը: Առաջին հայացքից կարծես ստացվում է հակասություն՝ XIII դարի թարգմանության մեջ առկա են կաֆաներ, որոնք մի շարք այլ աղբյուրներից հայտնի են XVI դարում ապրած Գր. Աղթամարցու անունով:

Շիրակվանեցու հիշատակարանի առկայությունը չպետք է կասկածի տակ ունի այդ ձեռագրում ևս Աղթամարցու հորինած որոշ կաֆաների ներթափանց-

<sup>28</sup> Հ. Տաշյան, Ցուցակ ձեռագրաց..., էջ 354:

ման հնարավորությունը: Անկասկած, XIII դարի հիշատակարանը պահպանած այս ձեռագիրը հարստացել է հետագայի տարբեր հեղինակների՝ այդ թվում և Գր. Աղթամարցու կաֆաներով: Նույն եղանակով էլ Աղեքսանդրի պատմության մեջ տեղ գտած ամենատարբեր հեղինակների զանազան կաֆաներ երկար ժամանակ վերագրվել են Խ. Կեչառեցուն, նրա մի հիշատակարան-կաֆայի հիման վրա, ուր ասվում է.

Առ ձեզ պաղատանք ընկնիմ,  
Ընթերցողք, գրոցս ի լման,  
Ըզկեչառեցիս մուրսս,  
Արարէլ յիշման գիս արժան,  
Որ ոտանաւոր ամէն,  
Ասացի, զինչ ի սմայ, որ կան...<sup>29</sup>

—հիշատակարանը գրվել է XIV դարում, իսկ Պատմությունը շարունակել է կաֆաներ ներառնել նույնիսկ XVI—XVII դարերում:

Ինչպես երևում է, պրպտումներն առայժմ ուրվագծում են Պղնձե քաղաքի պատմության բնագրի մեջ կաֆաների ներհյուսման գործում Գր. Աղթամարցու կատարած աշխատանքի միայն որոշ կողմերը: Սակայն այսքանն էլ որոշակի հիմք է տալիս պնդելու, թե տաղերգուի գրչից ելած կաֆաները ավելի են, քան ներկա հոդվածում հիշատակվածները:

Պղնձե քաղաքի որոշ կաֆաներ կապվում են Զաքարիա Գնունյանց բանաստեղծի անվան հետ: Նկատենք, որ նախկինում (Ն. Ակինյան, Գ. Հովսեփյան և այլք) Զաքարիան իբրև կաֆագիր հիշատակվել է լոկ Աղեքսանդր Մակեդոնացու պատմության կապակցությամբ: Պարզվում է, սակայն, որ Պղնձե քաղաքի պատմության որոշ կաֆաներ ևս հուշում են Զաքարիա Գնունյանցի անունը: Հետաքրքիր է, որ մեզ հայտնի ձեռագրերում Զաքարիայի կաֆաները ոչ թե ցրված են բուն բնագրում, այլ ուրիշ կաֆաների հետ կցված են Պղնձե քաղաքի պատմության վերջից՝ իբրև հավելված, առանց հեղինակի անվան հիշատակության: Եվ քանի որ որոշ հիմքեր կան ենթադրելու, որ Զաքարիայի կաֆաները Պղնձե քաղաքի պատմություն մուտք են գործել միջնորդաբար՝ Աղեքսանյոր Մակեդոնացու պատմության միջոցով, ապա այս հարցին մենք նպատակահարմար ենք գտնում անդրադառնալ մեկ այլ անգամ՝ Աղեքսանդր Մակեդոնացու պատմության հետ Զաքարիայի առնչությունները քննելու կապակցությամբ:

Պղնձե քաղաքի պատմության հայերեն թարգմանությունը, այսպիսով, իր բազմադարյան գոյության ընթացքում աստիճանաբար համալրվելով նորանոր կաֆաներով, ընդհանուր առմամբ պարունակում է մոտ 100 կաֆա: Այդ կաֆաները ներկայացնում են երկու առանձին խմբավորում. 1. բնագրից եկող կաֆաներ (բնական ողբեր), որոնց թիվը նախնական տվյալներով հասնում է 10-ի և 2. հայ հեղինակների ստեղծած կաֆաներ: Դատելով այս հոդվածում հրապարակված փաստերից, երկրորդ խմբավորման կաֆաներից հայտնի են դառնում Մխիթարի (XIII դ.) 5 կաֆա, Հովսեփ Աղթամարցու (XVI դ.) 1 կաֆա և Գրիգորիս Աղթամարցու (XVI դ.) 23 կաֆա: Բնական է, որ Պատմության մնացած կաֆաները ստեղծվել են ոչ միայն այս, այլև ուրիշ հեղինակների կողմից, որոնց անունները, սակայն, չեն պահպանվել:

<sup>29</sup> Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 3587, Թ. 26ա: